

Ալեքսանդր Շիրվանզադե

Արսեն Դիմաքսյան

Երրորդ մաս, XVI - XVII

XVI

Նրանք նստած էին Մարգար աղայի սենյակում առանձին: Դիմաքսյանը փափագում էր ուսումնասիրել յուր ընկերոջ ներքին աշխարհը, թափանցել նրա սիրտը և տեսնել կա՞ արդյոք այնտեղ մի բարձր գաղափար: Ահա ինչու նա խորին հետաքրքրությամբ, աչքերը Հաբիգյանի երեսին, սպասում էր նրա բացատրությանը:

Գիտե՛ս ինչ, սկսեց Հաբիգյանը հանդարտ ձայնով, ես առհասարակ այն մտքի դեմ եմ, թե իբր հասարակական գործիչը պետք է լինի անսահման անձնվեր, անշահասեր: Լավ է, որ այդպես լինի, բայց դա մի գեղեցիկ և անիրագործելի երազ է: Աշխարհիս երեսին, իմ կարծիքով, չկա ոչ անպայման անձնվիրություն, ոչ առասպելական անշահասիրություն: Եվ եթե կա, դա միայն հազվագյուտ ընտրյալների հատկություններն են, ընտրյալներ, որոնք երկար դարերի ծնունդ են: Մարդիկ սովորաբար ուրիշների օգտի համար գործում են երկու շարժառիթներից դրդված բարոյական և նյութական: Բարոյականը փառասիրությունն է, եթե չասենք փառամոլությունը, նյութականը շահասիրությունն է, եթե չասենք շահամոլությունը: Երկու դեպքում էլ չկա և չի կարող լինել անպայման ինքնամոռացություն:

Յատուկ Պոէմ

Փառասիրությունից դրդված ուրիշների համար գործելը, նկատեց Դիմաքսյանը, ինձ համար դեռ հասկանալի է, բայց ի՛նչ ասել է շահասիրությունից գործել, այդ ինձ համար անհասկանալի է: Կպարզեմ որքան կարող եմ: Ես աշխատում եմ քեզ հարստացնել, որովհետև ինքս էլ օգուտ ունիմ քո հարստանալուց: Գուցե, եթե դու ինձ մի հայտնի տոկոս չտայիր քո եկամուտներից, եթե ծառայեի մի որոշ ռոճիկով ավելի պակաս եռանդով վերաբերվեի քո գործերին կամ ուղղակի անտարբեր լինեի: Բայց այժմ ես քո գործը իմն եմ համարում: Ահա այստեղ իմ նյութական շահը իմ եռանդի առաջին ստիմուլն է:

Ընդունենք, որ այդպես է. օրինակը պարզ է, բայց ոչ այնքան հաջող: Դու կապեցիր միմյանց հետ քո և իմ շահերը, բայց մենք երկու անհատներ ենք, և դու ծառայելով իմ գործերին, չես կարող ասել, թե ծառայում ես հասարակությանը:

Թող աստված հեռու պահի ինձ այն մտքից, որ երբևիցե ինձ հասարակական գործիչ համարեմ: Ոչ, ես այդ չէի ուզում ասել: Բայց կարծում եմ, որ աշխատելով խելացի կերպով շահագործել քո կալվածները, դրանով այսպես թե այնպես հարստացնում եմ երկրի ընդհանուր արդյունաբերությունը:

Օրինա՞կ:

Օրինակ, իմ և քո շահերը պահանջում են մի գյուղից մյուս գյուղ ճանապարհ շինել, մենք շինել ենք տալիս, և նրանով հեշտացնում ենք բոլոր գյուղացիների համար հաղորդակցության միջոցները: Մեր անձնական շահերը պահանջում են մի շոգեշարժ աղորիք ունենալ մենք շինում ենք, և դրանով միջոց ենք տալիս գյուղացիներին կարճ ժամանակում և էժան գնով իրանց ցորենը աղալ: Մենք ժամանակակից եղանակով մշակում ենք մեր հողերը, մեզանից օրինակ են առնում մեր դրացիները: Այս դեպքում մենք դառնում ենք մի տեսակ ուսուցիչ, քաղաքակրթություն տարածող գործոններ:

Մի վայրկյան նա լռեց, մի ծխախոտ վառեց և ապա շարունակեց նույն սառնասրտությամբ և դրական ոճով:

Ես քեզ ցույց տվեցի հողեր, որոնք ջրի պակասությունից չեն մշակվում կամ մշակվում են շատ անհաջող: Եթե մեր ծախսով այդ հողերով մի առու

անցկացնենք, նախ, մենք ինքներս կունենանք մեծ շահ, երկրորդ, գյուղացիները մեզ կհամարեն հազվագյուտ բարերարներ, մեզ երկրպագություն կտան, կպաշտեն: Ես կարող եմ հարյուրավոր օրինակներ առաջ բերել, բայց կարծեմ այսքանն էլ բավական է: Այս է գործնական մարդու բերած օգուտը, այսինքն ինձ նման մի մարդու, որ, եթե ուզում ես, միայն իմ անձնական շահերը ունիմ աչքի առջև: Բայց ինչե՛ր կարող է անել մի ուրիշը, դիցուք հենց քեզ նման մի գաղափարական մարդ: Դու ունիս բավական մեծ հարստություն, և նա օրեցօր պետք է ավելանա: Եթե չես ուզում խոշոր դրամատեր կամ, ինչպես ասում ես, մեծ կալվածատեր լինել, շատ գեղեցիկ, մի՛ լինիլ: Բայց մի՛ թողնիր, որ քո հարստությունը իզուր տեղը անօգուտ մնա: Ե՛կ այստեղ, բաց արա քո հաշվով ուսումնարաններ, աղքատ գյուղերում, թո՛ղ հարյուրավոր գյուղական խեղճ մանուկներ ձրի կրթություն ստանան: Հիմնի՛ր մի գյուղատնտեսական դպրոց կամ մի օրինակելի ագարակ և թող այնտեղ գյուղացիները դասեր առնեն գյուղատնտեսության զանազան ճյուղերի վերաբերմամբ: Եվ միթե ա՞յս միայն կարող ես անել դու: Քո առջև գործելու մի այնպիսի ասպարեզ կա, որ, ճշմարիտ, զարմանում եմ ինչո՞ւ դու արհամարհում ես այդ ասպարեզը և հուսահատ կռիվ մղում մի ամբողջ հասարակության դեմ:

Նա ոտքի կանգնեց, մի անգամ անցավ սենյակի մյուս ծայրը, հետ դարձավ, նորից նստեց և շարունակեց:

Ես ինքս մեծ հետաքրքրությամբ հետևում եմ քո գործունեությանը և, անկեղծ եմ ասում, զարմանում եմ քո եռանդի, հոգեկան ուժի և մտավոր կարողության վրա: Տեսնում եմ, որ դու մեր թմրած հասարակության մեջ մտցրել ես նոր մտքերի մի թարմ հոսանք: Այո՛, այդ ամենը հարկավոր է, հիանալի է և ծափահարության արժանի, բայց ասա խնդրեմ, ի՞նչ վերջ պետք է ունենա քո կռիվը: Չեմ ասում քեզ համար, քեզ այնքան պետք է հալածեն, որ վերջը ոչնչացնեն ինչպես մի մարդու, որ աշխատում է քանդել խավար ամբոխի համար սրբություն համարված վնասակար նախապաշարմունքները: Այո՛, ի՞նչ օգուտ, անմիջական օգուտ, պետք է ունենա քո գործունեությունը այն թշվառ ժողովրդի համար, որին քո աչքով տեսար: Մինչդեռ հենց այդ ժողովուրդն է կարոտ վերակենդանության և հենց նրա անմիջական շահերի համար և նույնիսկ նրա շրջանում պետք է գործել:

Վերջին խոսքերը արտասանելիս, Հաբիգյանի կոշտ ձայնի մեջ զգացվեց բավական մեղմ հնչյուն: Կարծես, նա փոքր-ինչ զգացվել էր, երկար տարիներից հետո առաջին անգամ այդպես մտերմաբար խոսելով յուր նախկին ընկերոջ հետ: Դիմաքսյանը լուռ լսում էր, առանց հերքելու նրա ասածները կամ համաձայնության որևէ նշան ցույց տալու: Նա, կարծես, մտքում կշռում էր Հաբիգյանի յուրաքանչյուր խոսքը:

Կարելի է ես սխալվում եմ, շարունակեց Հաբիգյանը, բայց խորին համոզմունքը այս է. դու այստեղ, քո ծննդավայր հողի վրա, կարող ես ավելի օգտակար լինել, քան թե այնտեղ, ուր այժմ գործում ես: Այս պատճառով ես շատ ուրախ կլինեի, որ դու թողնեիր ամեն ինչ և գայիր այստեղ գործելու: Այն ժամանակ քեզ հետ կարելի է ես էլ մի քիչ գաղափարական մարդ դառնայի և միայն իմ անձնական շահերից դրդված չաշխատեի: Դու կտայիր ինձ ծրագիր ես կկատարեի, դու կլինեիր կարգագրող հրամանակատար, այդ ինձ համար թե՛ հաճելի կլիներ և թե՛ բարոյապես օգտակար:

Մի ժամանակ գրեթե միևնույնը առաջարկում էր և՛ Մսերյանը: Բայց այնտեղ չէր զգացվում այնչափ հավատ, համոզմունք, որչափ Հաբիգյանի խոսքերի մեջ: Գուցե այդ նրանից էր, որ իդեալիստի բերանով խոսում էր մի ժամանակավորապես վհատված հոգի, մի վշտացած սիրտ, կյանքի անհաջող դեպքերի տպավորության տակ: Դիմաքսյանը զգաց, որ Հաբիգյանը համեստությունից է ասում, թե յուր գործունեության շարժառիթը անձնական շահերն են: Նա կարծում էր, եթե այդ մարդը լիներ նրա հարստության լիազոր տերը, նույնը պետք է աներ, ինչ որ առաջարկում էր նրան:

Այս խոսակցությունից մի քանի օր անցած Դիմաքսյանը մի անգամ ևս Հաբիգյանի հետ ճանապարհորդեց գյուղերը և այս անգամ ավելի մոտիկ ծանոթացավ ժողովրդի կարիքների հետ: Այնուհետև հաճախ նա մտածում էր Հաբիգյանի առաջարկության մասին: Չետևե՞լ արդյոք նրա խորհրդին, թողնե՞լ գործունեության այժմյան եղանակը, կտրե՞լ բոլոր կապերը մոտիկ անցյալի հետ և ընտրել նոր ասպարեզ:

Նա տատանվում էր, կասկածում, թե կարող է ավելի օգտավետ լինել այդ ասպարեզում: Կար մի կետ, որ նրա առջև ներկայանում էր ինչպես մի մեծ

խոչընդոտ. յուր սրտի մեջ նա չէր գտնում բավականաչափ սեր դեպի գավառական կյանքը: Նա զգում էր, որ ոչ մի նպատակ չի կարող իրան երկար ժամանակ պահել մի շրջանում, ուր չէր տեսնում մտքի պատերազմի համար քիչ թե շատ ընդարձակ ասպարեզ: Ոչ, ոչ, նա յուր մեջ չի գտնում խաղաղ, անխռով գործունեության ձգտում, նա ծարավ էր հասարակական կռվի: Նա չէ կարող շնչել և ապրել առանց հավասար թշնամիների:

«Ավելի լավ է միշտ հալածվեմ, միայն թե կռվեմ այդ անշարժ հասարակության նախապաշարմունքների դեմ, քան թե թմրած կյանք վարեմ մի խուլ անկյունում: Ի՞նչ կարող եմ անել գյուղական ժողովրդի համար. ճանապարհնե՞ր շինել, ջրե՞ր անցկացնել նրա հողերով, ուսումնարաննե՞ր բաց անել: Այդ բոլորը լավ գործեր են, մեծ գործեր են, բայց ինձ համար չեն: Հաբիգյանը ավելի հաջող կարող է կատարել այդ գործերը, քան թե ես, որովհետև նա ավելի սերտ կապերով է կապված գյուղական ամբոխի հետ…»:

Եվ միթե նա ա՞յդ գաղափարն էր փայփայել տարիների ընթացքում: Մի՞թե երբևէ երևակայել էր, թե յուր կյանքը պետք է դնի մի նեղ շրջանակի մեջ:

«Ներքևից սկսել, ինչպես ասում էր Մսերյանը և ինչպես կրկնում է այսօր Հաբիգյանը: Իսկ եթե ես այդպիսի ձգտում չունե՞մ, միթե կեղծե՞մ, ստե՞մ, և սկսեմ գործել հակառակ իմ զգացումների: Ոչ, չեմ ուզում, չեմ կարող: Թող դա լինի անհամեստություն, բայց ես իմ մեջ զգում եմ «վերևից» ազդելու ուժ: Այո՛, ես չեմ կարող հասարակ գործիք լինել, բայց կարող եմ գործիքներ պատրաստել: Ես այդ կապացուցանեմ և ընդունակ եմ ապացուցանելու: Չէ՞ որ եթե մի կողմից ինձ հալածում են, մյուս կողմից կան մարդիկ, որ ինձ հավատում են, որոնց վրա ես ազդեցություն եմ արել…»:

Դարձյալ նրա միտքը պարզվեց, սիրտը գրգռվեց: Դարձյալ նրա աչքի առջև պատկերացավ մի լուսավոր ապագա, դեպի ուր վճռել է և պետք է դիմե յուր ամբողջ կյանքի ընթացքում: Անցան րոպեական տատանումները, կասկածները և նորից նա հետաքրքրվեց տեղական հասարակական կյանքով: Նա հանդիպեց նույն սիրալիր ընդունելության, նույն հարգանքին, ինչ որ առաջ: Կրկին նրան շրջապատեցին այն մարդիկ, որոնց մտքի և սրտի վրա նա ազդեցություն էր ունեցել: Ոչ ոք կասկածանքով չէր վերաբերվում դեպի նա: Երևի, կամ նրա

մասին տարածված լուրը չէր հասել յուր հայրենի քաղաքը կամ հասել էր, և ոչ ոք նշանակություն չէր տալիս նրան:

Օրերը անցնում էին օրերի հետևից, և նա դեռ չէր մտածում Թիֆլիս վերադառնալու մասին: Այն զգացումները, որ այնքան տանջում էին նրան, այժմ մեղմացել էին և ճնշող ներգործություն չէին անում նրա վրա: Առավոտները նա զարթնում էր վաղ, զբոսնում էր պարտեզում, խաղում էր յուր քրոջ զավակների հետ, ապա փակվում էր յուր սենյակում և երկար ժամանակ պարապվում:

Երբեմն միայն առանձնության մեջ նրա սրտում բարձրանում էր մի թեթև փոթորիկ: Նա հիշում էր յուր անցյալի ամենածանր րոպեները և ամենից պարզ ու որոշ պատկերանում էր այն վերջին երեկոն, երբ նա խորհել էր ինքնասպանության մասին: Ոչ, ոչ, այլևս նա այդչափ չի հուսահատվիլ, այդ րոպեները անցան, գնացին անդառնալի: Այժմ նա բժշկվել է և եթե ոչ բոլորովին, շուտով, շուտով կբժշկվի:

«Ես զգում եմ, որ իմ մեջ մի ինչ-որ փոփոխություն է կատարվում, գրում էր նա Մսերյանին յուր վերջին նամակում, թե ինչ կլինի վերջը չգիտեմ: Բայց հույս ունիմ, որ դու ինձ այլևս այնպես չես տեսնիլ, ինչպես էի մի ժամանակ… Անցյալ նամակումս ես գրել էի քեզ Հաբիգյանի մասին, այո՛, նա հազվագյուտ մարդ է: Իմ մեջ հղացել է մի միտք ձեզ երկուսիդ մոտեցնել միմյանց մի ընդհանուր գործով: Այսպիսի մի գործ կա, և ես հույս ունիմ դու հանձն կառնես նրան ծառայելու: Բայց առայժմ քեզ ոչինչ չեմ գրիլ այս մասին, շուտով անձամբ կտեսնվենք և կխոսենք… Մի՛ կարծիր, որ այստեղ անգործ նստած եմ, երբեք ես այնպես զբաղված չեմ եղել, ինչպես այժմ… Ցտեսություն, նամակ մի՛ գրիր, սպասիր ինձ…»:

Երբեմն նա կանչում էր յուր մոտ Հաբիգյանին, կրկին և կրկին անգամ հարցուփորձ էր անում յուր այցելած գյուղերի մասին: Առանձնապես նա հետաքրքրված էր գյուղական մանուկների թվով: Նա զանազան հաշիվներ էր անում, գրում էր, մտածում, ստեպ-ստեպ այցելություն անում տեղական թեմական առաջնորդին:

Հաբիգյանը հետաքրքրված հարցնում էր, թե նա ինչու համար է այդ տեղեկությունները հավաքում: Բայց Դիմաքսյանը ոչինչ չէր պատասխանում: Մի անգամ նա միայն ասաց անորոշ.

Ուզում եմ քո աչքին անօգուտ մարդ չերևալ…

XVII

Մոտ երկու շաբաթ անկողնում պառկելուց հետո Բարաթյանը կարողացավ, վերջապես, ոտքի կանգնել: Բայց նա բոլորովին չէր առողջացել: Բժիշկներից ոմանք խորհուրդ էին տալիս նրան գնալ արտասահման և այնտեղ ենթարկվել մի դժվարին օպերացիայի, եթե կամենում է մի անգամ ևեթ արմատապես բժշկվել ժառանգական ցավից: Եվ նա մտադիր էր հետևել նրանց խորհրդին:

Առայժմ նա կարգադրում էր յուր հայրական գործերը: Նա վճարեց յուր բոլոր պարտքերը և, ժառանգությունը հաստատելով յուր անունով՝ ապահովեց իրան բոլորովին: Այժմ նա իրան զգում էր ավելի բախտավոր, քան երբևէ զգացել էր: Թվում էր նրան, որ դրամական վարկի հետ նորից ամրանում է և յուր բարոյական վարկը: Հասարակությունը այլևս առաջվա պես չէր զբաղվում նրա ընտանեկան կյանքով, և կարծես ամենքը սկսել էին մոռանալ նրա մասին տարածված աննպաստ լուրերը:

Երբեմն նա հիշում էր այրի Բախտամյանից ստացած վիրավորանքը, բայց հիշում էր վայրկենաբար, առանց երկար մտածելու այդ մասին:

«Բարոյական վիրավորանքը, ասում էր նա ինքն իրան, այն ժամանակ է ազդու, երբ կատարվում է հրապարակորեն: Այդ կինը երբեք չի համարձակվիլ ուրիշին հաղորդելու ապտակի մասին, ուրեմն ինչո՞ւ արյունս պղտորեմ մի չնչին բանի համար: Այո՛, մարդիկ շատ անգամ ոչինչ բանից իրանց համար տանջանք են ստեղծում: Ճշմարիտ էր ասում հայրս, թե ինչքան քիչ մտածես վերքիդ մասին, այնքան նա քեզ քիչ ցավ կպատճառի…»: Այո՛, այո, չմտածել, այլ ապրել է հարկավոր և միայն ապրել…»:

Հաճախ նա տեսնվում էր Վեքիլյանի հետ: Նրանց հարաբերությունները շարունակվում էին առաջվա ուղղությունով, թեև զգալի էր, որ իրավաբանը յուր սրտում ամեն կերպ աշխատում էր թաքցնել մի տեսակ ատելություն դեպի յուր ընկերը:

Առավոտ էր: Թեյի բաժակը առջևը դրած, Բարաթյանը կարդում էր օրվա լրագիրները, երբ ներս մտավ Վեքիլյանը բոլորովին անսպասելի: Երբեք նա այդպես վաղ չէր այցելել յուր ընկերոջը:

Ես եկել եմ մի անհետաձգելի և կարևոր գործի համար, ասաց նա լուրջ ձայնով, և այսպես վաղ եկա, որ քեզ տանը տեսնեմ: Լսի՛ր, այրին ուզում է Պյոտր Սոլոմոնիչի կտակի դեմ դատ բաց անել:

Մի՞թե, արտասանեց Բարաթյանը անտարբեր:

Ես այդ իմացա եթեկ գիշեր կլուբում: Այնտեղ քեզ շատ պտրեցի, բայց չտեսա…

Երեկ թատրոնից գնացի Կրուժոկ ընթրելու: Ո՞ւմ միջոցով է ուզում դատ բաց անել:

Փաստաբանի:

Միթե կա՞ այնպիսի փաստաբան, որ այդ գործը հանձն առնի:

Կան փաստաբաններ, որոնք ոչ մի գործից չեն հրաժարվում: Այրին մի այդ տեսակ մարդու է դիմել:

Աա՛, արտասանեց Բարաթյանը անորոշ, ուրեմն նա քո և Ամբակում Աֆանասևիչի դեմ վատ խա՞ղ է սկսում…

Ինչո՞ւ միայն իմ և Ամբակում Աֆանասևիչի, գուցե և մի ուրիշի դեմ, նկատեց Վեքիլյանը խորամանկությամբ:

Լուրը Բարաթյանի վրա վատ տպավորություն էր գործել, իսկ իրավաբանի վերջին նկատողությունը ավելի վախեցրեց նրան: Նորից նրա աչքի առջև

Յատուկ Պոէմ

պատկերացավ դատաստանի խայտառակ պերսպեկտիվը, նորից նա յուր անունը, պատիվը և վարկը տեսավ հասարակության բամբասանքին ենթարկված:

Միթե տիկինը այդ բանը կանե՞, հարցրեց նա, դեռևս կարողանալով զսպել յուր վրդովմունքը:

Եթե չկամենա էլ, փաստաբանը անպատճառ կհամոզի նրան անել:

Բայց կհաջողվի՞ նրան դատը:

Դժվար է նախագուշակել. օրենսդրության մեջ կան այնպիսի բաց տեղեր, որոնք շատ անգամ ճարպիկ փաստաբանի ձեռքում հաջող գործիք են դառնում: Ես այդ դատից վախենում եմ:

Վախենալով բան չի լինիլ, պետք է գործել: Ինչ ե՞ս մտադիր անելու:

Վեքիլյանը մի քանի վայրկյան մտածեց, ապա դրական եղանակով պատասխանեց.

Իմ խորին համոզմունքով, քանի որ գործը սկսված չէ, պետք է նրան խափանել: Եթե այրին մինչև անգամ բոլորովին էլ դատը տանուլ տա, դարձյալ դատաստանական պրոցեսը վտանգավոր է: Չեմ կարող ասել, թե նա ում նյութականին կվնասի, բայց թե բարոյական վնաս կունենա դա անհերքելի է:

Չեմ հասկանում ասածդ:

Պետք է ասած, շարունակեց Վեքիլյանը նույն եղանակով, որ այդ տեսակ գործերում շատ անգամ մի երրորդ, չորրորդ, մի չեզոք համարված մարդ ավելի է պատժվում, բարոյապես եմ ասում, քան թե դատին անմիջապես խառը մարդիկ…

Այս անգամ ակնարկը կարոտ չէր բացատրության, սակայն Բարաթյանը դարձյալ փորձեց չգիտցող ձևացնել և ասաց.

Այո՛, քո ասածը ճիշտ է, այդ պատահում է, ուրեմն աշխատիր դատի առաջն առնելու…

Ես կկամենայի, որ դու էլ մեզ օգնես այս գործում: Ես ի՞նչ կարող եմ անել:

Պետք է փաստաբանին կաշառել:

Կաշառե՞լ:

Այո՛, դա միակ միջոցն է խայտառակ դատից ազատվելու համար:

Էէ՛, շատ լավ, ինչո՞ւ չես կաշառում:

Երեկ գիշեր Ամբակում Աֆանասևիչը և ես վճռեցինք այս գործը քեզ հանձնել:

Ի՞նձ:

Այո՛:

Ինչո՞ւ:

Որովհետև թե՛ ինձ և թե նրա համար անհարմար է:

Բայց ես ինչո՞ւ պիտի խառնվեմ այդ գործին:

Այդ կարծեմ, քեզ ավելի հայտնի պետք է լինի, քան թե ինձ…

Բարաթյանը նայեց ընկերոջ երեսին և, աշխատելով անփույթ ժպտալ, արտասանեց.

Դու, երևի, ինձ հետ կատակ ես անում:

Երբե՛ք:

Ուրեմն ավելի պարզ խոսիր:

Յատուկ Պոէմ

Իրավաբանը մի առժամանակ լռեց, սեղմեց շրթունքները ատամներով և, վերջապես, ուղիղ նայելով Բաբաթյանի երեսին, ասաց.

Լսի՛ր, դու միշտ եղել ես զգույշ, խոհեմ և խելոք: Հենց այդ հատկություններիդ համար ես քեզ միշտ հարգել և այժմ էլ հարգում եմ: Այս անգամ էլ եղիր զգույշ, խոհեմ և խելոք, մի՛ ստիպիր ինձ ամեն բան բացատրել, հասկացիր, որ քո անունին վտանգ է սպառնում:

Բարաթյանը լռեց և ընկավ մտատանջության մեջ: Նա չէր կամենում իսկույն, առանց ընդդիմադրության, ենթարկվել յուր ընկերոջ կամքին:

Գիտե՞ս, ասաց նա, դու ինձ շատ վատ առաջարկություն ես անում. կաշառել և կաշառք վերցնել միևնույն հանցանքն է:

Հանցա՞նք, կրկնեց Վեքիլյանը, հեգնորեն ժպտալով, երանի քո և իմ հանցանքը միայն այդ լիներ… համառություն մի՛ անիր, դու ստիպված ես երկու շարքից փոքրագույնը ընտրել:

Ինչո՞ւ եմ ստիպված, գոչեց Բարաթյանը վերջապես, չկարողանալով զսպել յուր վրդովմունքը:

Ինչո՞ւ… Լա՛վ, քանի որ ուզում ես իմանալ, լսի՛ր, ուրեմն: Ստիպված ես դու, ինչպես և՛ ես, որովհետև այրիի դատը կարող է մեր երկուսի անունին կպցնել մի կարճ ածական գող:

Վեքիլյա՛ն:

Իզուր ես վրդովվում: Այո՛, ես ու դու գող ենք: Զանազանությունը միայն այն է, որ ես հասարակ գող եմ, իսկ դու պատվի գող: Թողնում եմ քեզ դատելու, թե որն է այս երկուսից ավելի վատը: Բարաթյան, մենք միմյանց շատ լավ ենք ճանաչում, այնպես չէ՞, տեսնո՞ւմ ես, որ ես ճշմարտությունը քեզանից չեմ թաքցնում: Ուրեմն դու էլ ինձ հետ անկեղծ եղիր գոնե մի օր, մի ժամ: Ամբակում Աֆանասևիչը և ես օգտվել ենք հանգուցյալի հարստությունից, թե ինչու դա կպարզվի դատաստանում: Իսկ դու հափշտակել ես նրա պատիվը. թե ինչպե՛ս դա էլ կպարզվի դատաստանում: Այո՛, ես համոզված եմ, որ ինչքան էլ դատը զգույշ

տարվի, պետք է այս գաղտնիքները պարզվեն: Այրին խելոք կին չէ. նա չի մտածում յուր անվան մասին, կամ շատ կարելի է մտածում է, բայց չէ՞ որ հուսահատված մարդը կորցնում է յուր առողջ դատողությունը: Իսկ դու խելոք ես, գոնե դո՛ւ մտածիր քեզ համար…

Բարաթյանը չհակառակեց: Նա լուռ և հուզված լսում էր, միևնույն ժամանակ ատելությամբ նայելով իրավաբանի երեսին:

Վճռի՛ր և իսկույն հանձն առ, շարունակեց Վեքիլյանը, որովհետև անկարելի է գործը հետաձգել: Վաղը կամ մյուս օրը փաստաբանը կարող է դատաստանին խնդիր ներկայացնել: Այդ մարդուն կաշառելը դժվար բան չէ, բայց դա բավական չէ: Դրանով մենք կարող ենք միայն ստիպել նրան գործից հրաժարվել: Բայց ուրիշ փաստաբաններ շատ կան: Անհրաժեշտ է այրիին էլ կաշառել: Վերջապես, ես ինքս այժմ տեսնում եմ, որ անգթություն է խեղճ կնոջը թողնել այժմյան դրության մեջ: Բայց այդ արդեն իմ և Ամբակում Աֆանասևիչի գործն է. մենք վճռել ենք նրան մի կերպ գոհացնել:

Երկար խորհրդակցելուց հետո, վճռեցին այսպես անել. Վեքիլյանը հենց այսօր ևեթ Բարաթյանին կլուբում հասարակ կերպով կծանոթացնի այրիի փաստաբանի հետ: Բարաթյանը խոսք բաց կանի ապագա դատի մասին, իհարկե, զգուշությամբ, որ փաստաբանին չխրտնեցնի: Իբրև հոգաբարձու նա իրավունք ունի պաշտպանել Ներսեսյան դպրոցի շահերը, որովհետև եթե կտակը քանդվի, դպրոցն էլ կզրկվի յուր մասից: Այսպիսով, նա փաստաբանին կներկայանա ինչպես մի հիմնարկության շահերի պաշտպան, և ինքնըստինքյան ոչ մի կասկած չի կարող տեղի ունենալ:

Այդ օրից սկսած Բարաթյանը հանգստություն չուներ: Նա մոռացավ ամեն ինչ և սկսեց հետամուտ լինել, որ մի կերպ խայտառակ դատի առաջն առնի: Չնայելով, որ արդեն լրացել էր յուր որոշած ժամանակամիջոցը, նա դեռ չէր մտածում երեխաներին բերել տալ Գայանեի մոտից: Այնինչ ամառվա շոգերը վրա էին հասել, հարկավոր էր երեխաներին ամառանոց ուղարկել:

Տիկին Սալամբեկյանը յուր սանիկներին արձակուրդ էր տվել: Մնում էին նրա մոտ միայն մի քանի գիշերօթիկներ, որոնց ծնողներն օտար քաղաքներումն էին:

Նա խնդրում էր Գայանեին վերցնել երեխաներին և նրա հետ միասին տեղափոխվել մոտակա գյուղերից մեկը, ուր նա ամառանոց էր վարձել: Բայց Գայանեն դեռ չէր վստահանում այդ անելու: Օր-օրի վրա նա սպասում էր, թե ահա ներս կմտնի Բարաթյանի ծառան և կպահանջի երեխաներին: Սարսափով, այո, կատարյալ սարսափով նա երևակայում էր այն րոպեն, երբ նա ստիպված պետք է լիներ բաժանվել նրանցից: Մի ամսվա ընթացքում նա այնպես ընտելացել էր յուր զավակների ներկայությանը, որ դժվարանում էր հավատալ, թե կարող է մի օր անգամ առանց նրանց ապրել:

Երկդիմի վիճակը օրեցօր ազդելով, դարձրել էր նրան նյարդային, անհամբեր. ամեն անգամ երբ նայում էր երեխաների անմեղ աչքերին, հիշում էր նրանց դրությունը, նրա սիրտն էր մորմոքվում: Պետք է վերջ տալ այդ վիճակին, դժվար է, անհնարին է երկար ապրել այդ անորոշության մեջ:

Եվ ոչ մեկը չէր կարողանում նրան մի որոշ ելք ցույց տալ: Տիկին Սալամբեկյանը ճգնում էր ամեն կերպ մխիթարել նրան: Աշխատում էր համոզել, թե չպիտի շատ փափկասիրտ լինել, թե երեխաներն իրանց հարազատ հոր մոտ պետք է գնան և ոչ թե օտարի, թե Գայանեն նրանց դարձյալ կտեսնի և այլն, և այլն…

Երբեմն նա փորձում էր մինչև անգամ ամաչացնել Գայանեին, կպչելով նրա ինքնասիրությանը:

Չգիտեմ, ինչպե՛ս ես համարձակվում ուսումնարան բաց անել՝ ուրիշների երեխաներին կրթելու, երբ քո սիրտը միայն քո զավակներին ես նվիրել: Ոչ, դու եսասեր ես, թույլ ես, դու չես կարող դաստիարակ լինել…

Այս խոսքերը զուր չէին անցնում, ազդում էին Գայանեի վրա: Նա սկսեց մտածել, որ իրավ ինքը չափազանցության է հասցնում յուր մայրական սերը: Այո՛, պետք է վերջապես զսպի յուր զգացումները հենց նույնիսկ յուր զավակների ապագայի մասին պարզ մտքով խորհելու համար: Եվ ահա նա ինքն յուր մտքում աշխատում էր հաշտվել նույնիսկ ծայրահեղ թշվառության հետ: Նա երևակայում էր ամենամեծ դժբախտությունը, այն է, որ ինքն իբրև թե բնավ զրկված է երեխաներից: Ի՞նչ պետք է անել, չէ՞ որ կան մայրեր, որոնք թաղել են իրանց բոլոր զավակներին. հապա ինչպե՞ս են նրանք կրում իրանց վշտերը:

Վերջապես, ինչո՞ւ հուսահատվել, խոմ այդ երեխաները պետք է մեծանան, պետք է հասկանան իրանց դրությունը: Այն ժամանակ նրանք իրանց կամքով կգան իրանց մոր մոտ… Այո՛, պետք է ապրել նրանց մի օր բախտավոր տեսնելու համար…

Այս խորհրդածությունները հետզհետե ամրացնում Էին նրա հոգին: Նա վճռեց արիությամբ սպասել ամեն տեսակ հարվածների: Ահա ինչու երբ, վերջապես, Բարաթյանը ծառային ուղարկեց երեխաների հետևից, նա շատ էլ չհուսահատվեց: Նա խնդրեց բժիշկ Սալամբեկյանին մի անգամ ևս միջամտել: Թող Բարաթյանը թույլ տա Թամարին հանձնել տիկին Սալամբեկյանի պարտեզը, իսկ Լևոնիկին պահել յուր մոտ մինչև աշուն:

Բժիշկն անմիջապես գնաց Բարաթյանի մոտ: Հակառակ սպասածին, Բարաթյանը նրան այս անգամ ընդունեց սիրով: Նա հոգեկան լավ տրամադրության մեջ էր: Բանն այն էր, որ մի քանի օր առաջ հաջող կերպով գործն ավարտել էր այրի Բախտամյանի փաստաբանի հետ: Վերջապես, Վեքիլյանը և Ամբակում Աֆանասևիչն էլ գոհացրել էին այրիին, նշանակելով նրա համար առանձին թոշակ: Այսպիսով, դատի առաջն առնվել էր և թե՛ Բարաթյանի, թե՛ Վեքիլյանի ու Ամբակում Աֆանասևիչի անունները ազատվել էին սպառնացող վտանգից:

Այժմ Բարաթյանը զբաղված էր քանի մի մանր գործերով, որոնց վերջացնելուց հետո պետք է ուղևորվեր արտասահման: Նա սաստիկ ցանկանում էր ճանապարհորդել, «մի փոքրիկ ազատ օդ շնչել»: Նա ինքն ուրախ էր այժմ առանց երեխաների ապրել՝ բոլորովին համոզված, որ իրանց մոր մոտ նրանք ավելի լավ են խնամվում: Ծառային նրանց հետևից ուղարկվելը արտաքին պատճառ ուներ. նա ուզում էր ցույց տալ, որ յուր զավակներին չի մոռացել: Իսկ վճռել էր ստիպողական դիրք չընդունել, եթե Գայանեն մի փոքրիկ անգամ ընդդիմություն ցույց տա:

Յուր իսկական միտումները բժիշկ Սալամբեկյանից թաքցնելով, նա արտաքուստ դարձյալ համառվեց երեխաներին իրանց մոր մոտ թողնելու: Սակայն երբ բժիշկը սկսեց թախանձել, նա, իբր թե ակամա արտասանեց.

Յատուկ Դրէմ

Թող քո ասածը լինի, ես խղճում եմ այդ կնոջը…

Բժիշկը զգացված հայտնեց յուր շնորհակալիքը և շտապեց ուրախալի լուրը Գայանեին հաղորդել:

Նրա դուրս գալուց հետո Բարաթյանի դեմքը սկսեց փայլել: Նա ինքն իրան ասաց.

«Այժմ դու կրկին անգամ ամուրի ես և ազատ… ապրի՛ր, ինչպես ուզում ես…»:

Նրա աչքերի մեջ ցոլաց անսովոր երիտասարդական զվարթություն, նա սկսեց ուրախ-ուրախ շվացնել… Մի քանի օր անցած Գայանեն Սալամբեկյանների հետ ուղևորվեց ամառանոց: Այժմ նա այլևս չէր մտածում ապագայի մասին: Նա երջանիկ էր, որ երեխաներին անորոշ ժամանակով իրան էին հանձնել: Իսկ հետո՞… հույս աներ այլևս հավիտյան չբաժանվել նրանցից…

Յատուկ Պոէմ